ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հոկտեմբեր 2023



Վեոլիան պարտավորվում է

Երկրների մեծամասնությունը, որտեղ գործում է մեր ընկերությունը, ընդունել է ազատ մրցակցության օրենքներն ու կանոնները: Այս օրենքներն ու կանոնները նպաստում են ուժեղ, բայց արդար առճակատման առաջընթացին գործունեության միևնույն ոլորտում գործող ընկերությունների շրջանում:

Ես մեծապես կարևորում եմ շրջակա միջավայրի վերափոխմանն ուղղված Գրուպի ամբողջ գործունեությունը՝ սույն օրենքների և կանոնների խստիվ պահպանմամբ:

Այս օրենքների և կանոնների ոչ բավարար գիտելիքները կարող են Վեոլիային, ինչպես նաև մասնավոր ֆիզիկական անձանց ենթարկել շատ լուրջ ռիսկի: Հանգամանքները կարող են վնասել Գրուպին ոչ միայն ֆինանսապես, դրանք կարող են նաև վտանգել Գրուպի համբավը և անունը: Ահա թե ինչու է Վեոլիան ակնկալում, որ իր բոլոր աշխատակիցները անդադար ապահովեն այս կանոնների և Էթիկայի ուղեցույցում զետեղված բոլոր ցուցումների հետ համապատասխանությունը: Ահա թե ինչու եմ ես Ձեզ խնդրում ի լրումն այս օրենքների և կանոնների լիարժեք իրականացմանը, տարածել դրանք և աջակցել դրանց ըմբռնմանն ու համակարգված կիրառմանը:

Մասնավորապես անհրաժեշտ է, և հենց սա է փաստաթղթի նպատակը, որպեսզի յուրաքանչյուր աշխատակից փնտրի և ճանաչի տարածքներ, որտեղ մրցույթի օրենքին վերաբերող դժվարություններ կարող են հանդիպել և այս դեպքերում առանց հապաղելու խորհրդատվություն իրականացնի անմիջական վերադասի և ընկերության իրավաբանական բաժնի հետ:

Վերջին տարիներին ընկերության կողմից առաջարկված տեղեկատվությունը և վերապատրաստման ծրագրերը այսպիսով կարևոր գործիք են հանդիսանում և օգնում են հավաստիանալ Վեոլիայի բոլոր աշխատակիցների կողմից մրցակցության օրենքի սկզբունքներին համապատասխանությանը:

Մրցակցության օրենքին համապատասխանությունը տալիս է լրացուցիչ ուժ: Այն է մեր ստեղծագործական ունակության, տեխնիկական կատարողականության, մեր առևտրային աշխատակազմի և հաճախորդների պահանջներին պատասխանելու ճկունության հետ մեկտեղ հնարավորություն, որպեսզի ապագայում մենք շարունակենք արժանանալ մեր հաճախորդների վստահությանը և նոր պայմանագրեր նվաճենք:

Estelle Brachlianoff, Վեոլիայի Գլխավոր Գործադիր տնօրեն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մրցակցության օրենքներ կան գրեթե այն բոլոր երկրներում, որտեղ Վեոլիան[1] գործում է:

Մրցակցության օրենքի կանոնները կարող են տարբեր լինել տարբեր երկրներում և համապատասխանել տարբեր իրավական համակարգերում, բայց դրանց բոլորի նպատակն է ապահովել շուկայում տնտեսական մասնակիցների այնպիսի գործունեություն և շուկաների կառուցվածք, որ ստեղծվի բոլորի ընդհանուր շահերից բխող արդյունավետ մրցակցություն:

Ընդհանրապես մրցակցության օրինախախտումները խստորեն պատժվում են (մասնավորապես Եվրոպական Միության երկրներում և Հյուսիսային Ամերիկայում): Նման խախտումներ թույլ տված ընկերությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց հանդեպ կիրառվում են մի շարք հնարավոր պատժամիջոցներ: Ընկերությունների համար պատժամիջոցներ կարող են հանդիսանալ տուգանքները, կառավարության հետ կնքված պայմանագրերի կասեցումը կամ դրանցից զրկումը, ինչպես նաև քաղաքացիական պատժամիջոցները (համաձայնագրերի անվավերություն, վնասներ, դատական արգելքներ), մասնավորապես խմբակային գործողությունների դեպքում: Ֆիզիկական անձանց համար կարող են կիրառվել քրեական պատժամիջոցներ (ֆիզիկական անձանց կողմից վճարման ենթակա տուգանքներ և նույնիսկ բանտարկություն): Քրեական օրենքի վերաբերյալ կանոնները Վեոլիայի համար մանրամասն շարադրված են “Խմբակային գործողությունների դեպքում քրեական ռիսկերի կառավարման և նվազեցման” Ուղեցույցում:

[1] Վեոլիա-ն վերաբերվում է բոլոր այն հաստատություններին, որոնք կապ ունեն խմբի հետ

Բացի խախտումների համար տուգանքներից մրցակցության օրենքները կարող են նաև լուրջ վնաս հասցնել ընկերության հեղինակությանն ու իմիջին, մասնավորապես սոցիալական ցանցերի միջոցով:

Ընդհանրապես տվյալ ընկերության մրցակցության օրենքները կիրառվում են գործարքի կամ գործունեության՝ իր տարածքում ուժի մեջ մտնելու պահից սկսած: Այդպիսով միջազգային խմբին պատկանող ընկերությունները և ղեկավարները ռիսկի են դիմում խախտել երկրի մրցակցության օրենքները նշված երկրից դուրս որոշված կամ անցկացված ակտի կամ գործարքի ուժով:

Պետք չէ դիտարկել մրցակցության կանոնները միայն որպես սահմանափակումներ: Դրանք կարող են նաև կիրառվել ի շահ մեր ընկերության՝ առաջարկելով մրցակցային հնարավորություններ և հնարավորություն տալով մտնել նոր շուկաներ:Վեոլիային կարող են վնասել իր մրցակիցների, մատակարարների կամ հաճախորդների հակամրցակցային գործողությունները և մեղադրանքները: Այդ պատճառով կարևոր է իմանալ, ինչպես ճանաչել նման իրավիճակները, որպեսզի Վեոլիային հնարավորություն ընձեռնվի պաշտպանել իր իրավունքները:

Այս ուղեցույցը մշակվել է Վեոլիա Գրուպի կողմից և կիրառվում է իր յուրաքանչյուր կազմակերպության հանդեպ: Ուղեցույցի հիմնական նպատակն է հնարավորություն տալ Գրուպի յուրաքանչյուր աշխատակցի հասկանալ մրցակցության օրենքի հիմնական կանոնները, որպեսզի ավելի լավ ճանաչել դրանց խախտման արդյունքում առաջացած ռիսկերը, խուսափել ցանկացած անուշադրությունից և օգտվել մեր նկարագրած հնարավորություններից: Ուղեցույցը նախատեսված չէ փոխարինելու գործող օրենքները յուրաքանչյուր երկրում, որտեղ գործում է Վեոլիան, Ուղեցույցում հատուկ փոփոխություն կարելի է կատարել տեղում:

ԿԱՐՏԵԼՆԵՐ Համաձայնություններ, համաձայնեցված գործելակերպ

Երկու և ավելի մրցակիցների միջև համաձայնությունները և համաձայնեցված գործելակերպը, որոնց նպատակը կամ ազդեցությունը մրցակցության հստակ սահմանափակումն է, արգելված են մրցակցության օրենքով և լրջորեն պատժվում են:

Նման արգելքի խախտումը պատժելու համար ամենևևին անհրաժեշտ չէ սահմանել ֆորմալ, գրավոր համաձայնություն: Ցանկացած մրցակցային մարմին կամ իրավական անձ, հիմնվելով առգրավված փաստաթղթերի վերլուծության վրա, կարող է եզրակացության գալ “կարտելի” գոյության մասին շահագրգիռ կողմերի ոչ պաշտոնական փոխանակումներից (էլ փոստ, հեռախոսազրույցների վերծանումներ և այլն) և շահագրգիռ կողմերի՝ միմյանց հետ շփվելու պահվածքից:

Ահա հիմնական իրավիճակները, որտեղ կարող եք հայտնվել.

1.1/ Մրցակիցների միջև կարտելներ

Գների վերաբերյալ համաձայնությունները մրցակիցների միջև, գնացուցակները, զեղչերը կամ ցանկացած այլ ծառայության մատուցման (կամ ապրանքների մատակարարման) պայմանները բերում են մրցակցության օրենքի լուրջ խախտման:

Նույնը վերաբերում է այն համաձայնություններին, ըստ որոնց մրցակիցները կիսում են որոշակի շուկաներ (աշխարհագրորեն կամ ծառայություններ/ապրանքներ) կամ հաճախորդների որոշակի տեսակներ: Այդպիսով արգելվում է համաձայնել (պաշտոնական կամ ոչ պաշտոնական ձևով) աշխարհագրական գոտու կիսմանը կամ որ որոշակի գործունեություն կամ հաճախորդի հատուկ տեսակ /ամբողջությամբ կամ մասնակիորեն/ պահվի այս կամ այն օպերատորի համար:

1.2/ Հայտի կեղծում

Երբ խոսքը վերաբերում է պետական պայմանա-գրերին կամ անհատական պայմանագրերին, մրցակիցներին արգելվում է մրցակցության ընթացքում տեղեկատվության փոխանակում, ինչպես նաև որևէ ձևով հայտերի համակարգում:

Հայտերի համակարգումը կարող է տարբեր ձևեր ընդունել, ինչպես օրինակ հայտեր, որոնք արհեստականորեն ավելի քիչ մրցակցային են (ծածկված հայտեր) կամ մինչև մանրամասն և հստակ հիմնավորումը, հայտը տվյալ հայտային ընթացակարգին ներկայացնելու ձախողումը:

Հատուկ հայտի համար թույլատրվում է դիմել ենթապայմանագրերի կնքմանը կամ ընկերությունների արագ համախմբմանը: Սակայն պետք չէ հայտային խմբի ստեղծումը, ինչպես նաև ենթապայմանագրերի կնքման

կազմակերպումը օգտագործել որպես շուկայի կիսում (օրինակ, ենթապայմանագրերի կնքումը այն ընկերության հետ, որը չի ընտրվել մրցույթի կազմակերպչի կողմից) կամ մրցակիցների համար շուկայի բացառում (օրինակ, խմբային համաձայնություն, որը սահմանափակում է մրցակցությունը):

Մեծ զգոնություն է պահանջվում այն ժամանակ, երբ խմբավորումը ներառում է շուկայի օպերատորների մեծամասնությունը, որոնք կարող են սահմանափակել մրցակցությունը և հեշտացնել շուկայի վերաբաշխումը:

Հայտային խմբերին մասնակցելու կամ ենթապայմանագրերի կնքմանը դիմելու համար ընկերությունները պետք է կարողանան ցույց տալ տեխնիկական, տնտեսական կամ այլ պատճառներ, որոնք տարել են դեպի տվյալ ուղին[2] (կոմպետենտության կամ ռեսուրսների փոխլրացում, միջոցների տնտեսում, ռիսկի կիսում):

[2] Ինչ վերաբերում է Ֆրանսիայում գործող մրցակցային ընթացակարգին, խմբի կամ ենթապայմանագրային համաձայնագրի ստեղծման վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հայտարարվի աճուրդի ժամանակ, նույնիսկ եթե այն չի հասել նպատակին: Եթե հայտային խմբի ստեղծումը ձախողվում է, շահագրգռված կազմակերպություններին չի թույլատրվում ներկայացնել առանձին առաջարկներ, քանի դեռ դրանք չեն փոխանակվել տեղեկատվությամբ, որը կարող էր ազդեցություն ունենալ իրենց առաջարկների անկախության վրա (օրինակ, գների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում) և նրանք տեղեկացնում են կապալառուին նման փոխանակման մասին:

1.3/ Մրցակիցների միջև առևտրային հույժ տեղեկատվության փոխանակում՝ մասնավորապես մասնագիտացված կազմակերպությունների կամ առևտրային միությունների աշխատանքին մասնակցելիս

Առևտրային հույժ կամ գաղտնի տեղեկատվության փոխանակումը մրցակիցների միջև արգելվում է: Սա ներառում է գներ, գնացուցակներ, զեղչեր, շուկայի բաժին, արտադրություն կամ ծառայություններ (կամ վաճառք) ծավալներ և արժեքներ, արտադրության կամ ծառայությունների կանխատեսումներ (կամ վաճառք):

Տեղեկատվության փոխանակումը ավելի վնասակար է, երբ այն ընդգրկում է ապագա վարվելաձևը, քան երբ այն վերաբերում է անցյալում դիտարկված գներին կամ իրականացված ծառայություններին (վաճառքին):

Քանի որ մրցակիցները հանդիպում են քննարկելու տնտեսական ոլորտի հարցեր, մասնագիտացված կազմակերպությունների կամ առևտրային միությունների աշխատանքին մասնակցությունը հանգեցնում է մեծ ռիսկի մրցակցության օրենքի ոլորտում: Ռիսկը սկիզբ է առնում ոչ միայն պաշտոնական հանդիպումներից, այլ միգուցե նաև ոչ պաշտոնական փոխանակումներից, որոնք կարող են կատարվել պաշտոնական քննարկումներից դուրս:

Այսպիսով Դուք պետք է հնարավորինս սահմանափակեք Ձեր մասնակցությունը մասնագիտացված կազմակերպությունների կամ առևտրային միությունների աշխատանքային խմբերին, որտեղ կարող եք գտնել հիմնական օպերատորներին: Ավելին, դուք չպետք է մասնակցեք առևտրային միության հանդիպումներից դուրս կազմակերպված որևէ ոչ պաշտոնական փոխանակման մրցակիցների ներկայացուցիչների հետ:

Եթե բիզնես գաղտնիությամբ պաշտպանված գաղտնի տեղեկատվությունը փոխանակվում է առևտրային միության հանդիպման ժամանակ, Դուք պետք է իսկույն լքեք հանդիպումը՝ հավաստիանալով, որ Ձեր հեռանալը և Ձեր անհամաձայնությունը գրանցվում են հանդիպման գրանցամատյանում:

1.4/ Գաղտնի համաձայնություն և “լավ փոխըմբռնում”

Ընդհանուր դուստր ձեռնարկության ստեղծմամբ կամ առանց դրա գոյություն ունեցող կամ հնարավոր մրցակիցների միջև հարաբերությունները, որոնց նպատակն է ստեղծել ընդհանուր գործունեություն կամ նախագիծ, որոնք հաճախ համապատասխանում են մրցույթին կամ նոր արտադրանքի զարգացման կամ միասին նոր շուկա մուտք գործելու համար փնտրտուքի մեջ են, հաճախ տնտեսական առաջընթացի և սպառողի բարեկեցության օգտին են: Սակայն կոնկրետ համաձայնությունները կամ դրանց պայմանները կարող են աղավաղել մրցակցությունը:

Մրցակիցների միջև ցանկացած գործընկերային նախագծի օրինականությունը պահանջում է մանրակրկիտ գնահատում՝ իրենց շուկայական դիրքի, համաձայնագրի նպատակի և պայմանագրային դրույթների հիման վրա: Այս համալիր վերլուծությունը պետք է կատարվի Գրուպի իրավաբանական բաժնի կողմից՝ նախագծային ղեկավարների օգնությամբ:

1.5/ Վերտիկալ համաձայնագրեր

Օպերատորի և իր մատակարարի կամ հաճախորդի միջև համաձայնագրերը կամ համաձայնեցված գործունեությունը (վերտիկալ հարաբերություններ) նույնպես կարող է ստեղծել մրցակցային սահմանափակում որոշակի պայմաններում: Հետևաբար նման համաձայնագրերը պետք է գնահատվեն մանրամասնորեն և ստանան նախնական հավանություն:

- **Բացառիկության դրույթ**

Սկզբունքորեն Վեոլիային չի արգելվում բացառիկ իրավունքներ վերապահել ծառայություն մատուցողին (կամ մանրածախ ապրանքներ տրամադրողին): Սակայն պետք է նշել, որ անկախ մրցակցության օրենքին իր համապատասխանության հարցին, Վեոլիայի ներքին խորհուրդը չի խրախուսում մատակարարներին բացառիկ իրավունքների տրամադրումը:

Ինչ վերաբերում է մրցակցության օրենքին, բացառիկության դրույթները մանրամասնորեն գնահատվում են: Դրանք վավեր են, եթե որոշակի պայմաններ բավարարված են (վերաբերում է մասնավորապես դրանց շրջանակին, տևողությանը, որը պետք է սահմանափակվի և համապատասխան շուկաներով հետաքրքրված կողմերի ուղղվածությանը): Այս h.13 “ մրցակցության օրենքին համապատասխանության” ներքին հիմնական ընթացակարգը հասանելի է իրավական ներցանցից:

- **Մրցունակության դրույթ, որը նաև անվանվում է “անգլերեն” դրույթ գնման համար**

Այս դրույթի համաձայն մատակարարը պարտավորվում է հաստատել իր առաջարկի ամենահամապատասխան լինելը այլ մատակարարի առաջարկի համեմատ:

Այս դրույթները ավելացնում են շուկայի թափանցիկությունը (մրցակից առաջարկների շփման միջոցով) կամ հնարավորություն են տալիս մատակարարին ազատվել իր մրցակիցներից և այդպիսով կարտելների համար չափանիշ դառնալ կամ չարաշահել դիրքը:

- **"Ամենաարտոնյալ հաճախորդի” դրույթ**

Այս դրույթը հնարավորություն է տալիս հաճախորդին իր մատակարարից խնդրել ավելի բարենպաստ պայմաններ, որոնք նա կարող էր կիրառել այլ հաճախորդների հանդեպ:

Որոշակի հանգամանքներում այս դրույթները կարող են ունենալ հակամրցակցային ազդեցություն և համարվել անվավեր:

Գերիշխող դիրքի չարաշահում

2.1/ Սահմանում

“Գերիշխող դիրք” հասկացությունը միշտ չի նշանակում, որ քննարկվող ընկերությունը շուկայում միակ մատակարարն է, այն ցույց է տալիս, որ շուկայում այն իրավասու է վերահսկել գները կամ բացառել մրցակիցներին: Ընդհանուր առմամբ, նույնիսկ չնայած գնահատման չափանիշների բազմազանությանը, գերիշխող դիրքի գոյությունը պետք է հաշվի առնել այն պահից սկսած, երբ կորպորացիան ունի շուկայի ծառայությունների և/կամ ապրանքների 40%-ից ավելի շուկայական բաժին տվյալ աշխարհագրական տարածաշրջանում:

Գերիշխող դիրք զբաղեցնելը չի արգելվում այն պայմանով, որ նման գերիշխող դիրքը ձեռք է բերվել և պահպանվում կամ բարելավվում է բացառապես այլ ընկերությունների հետ մրցելով “գործի էությամբ”, այսինքն ապրանքների կամ ծառայությունների որակի և ավելի մեծ տնտեսական արդյունավետության շնորհիվ:

Այնուամենայնիվ գերիշխող դիրք զբաղեցնելը տանում է շուկայում արդար մրցակցության վերաբերյալ ընկերությունների վրա ընկած “որոշակի պատասխանատվության”, որի դեպքում այս գերակշռությունը ուսումնասիրվում է ինչպես որ հարևան շուկաներում: Արդյունքում ոչ դոմինանտ ընկերությունների համար ընդունելի որոշակի գործողություններ արգելվում են դոմինանտ ընկերության համար, քանի որ դրանք հանգեցնում են գերիշխող դիրքի չարաշահմանը:

Շուկայի որոշակի կոնֆիգուրացիաներում (օլիգոպոլիա/դուոպոլիա) մի քանի ընկերություններ կարող են միասին զբաղեցնել “կոլեկտիվ գերիշխող դիրք”:

2.2/ Չարաշահում արձանագրող օրինակներ

Քանի դեռ դոմինանտ ընկերությունները շահագրգռված են, մրցակցության օրենքը արգելում է հետևյալ գործողությունները չափից մեծ կամ կողոպտիչ գնագոյացում, ծառայություններ (կամ վաճառք) ապահովելու մերժում, նման ծառայություններ (կամ վաճառք), մատակարարների կամ հաճախորդների վրա դրված բացառիկություն կամ մրցակիցների առաջարկին համապատասխանող առաջնահերթության մեծ իրավունք, ամենաարտոնյալ հաճախորդի դրույթ (որը հնարավորություն է տալիս հաճախորդին իր մատակարարից խնդրել ավելի բարենպաստ պայմաններ, որոնք նա կարող էր կիրառել այլ հաճախորդների հանդեպ), լոյալության սխեմաներ, խտրական գործելակերպ, քամահրում և այլն:

Կենտրոնացում (միացում, ձեռքբերումներ, համատեղ ձեռնարկություններ և այլն)

Մրցակցության օրենքը ոչ միայն վերահսկում է շուկաներում ընկերությունների գործելակերպը, այլ նաև ընկերությունների կողմից իրականացված գործարքները, որոնք ազդեցություն են գործում շուկաների կառուցվածքի վրա: Սա "կենտրոնացման վերահսկման" հարցն է:

Կենտրոնացման կանոնների վերահսկման նպատակն է պահպանել շուկայի մրցակցային հավասարակշռությունը տնտեսական ուժի կենտրոնացման զգուշացմամբ՝ ստեղծելով կամ ուժեղացնելով գերիշխող դիրքը, որը կարող էր զգալիորեն խոչընդոտել արդյունավետ մրցակցությունը:

Շատ երկրներում, որտեղ գոյություն ունի կենտրոնացման վերահսկում, կա գործարքից առաջ ծանուցում տալու պարտավորություն, երբ կանխատեսված կենտրոնացումը գերազանցում է որոշակի սահման, խիստ տույժերի կիրառմամբ: Ուստի ամեն դեպքում անհրաժեշտ է խորհրդակցել մրցակցության օրենքի իրավական բաժնի հետ և հետևել Գրուպի ներքին ընթացակարգին, որը կիրառելի է ղեկավարության հանդեպ և կենտրոնացման գործարքների ծանուցմանը: Այս ներքին h°12 հիմնական ընթացակարգը հասանելի է իրավական ինտրանետային կայքում:

Պետական օգնություն

Եվրոպական Միությունը ստեղծել է "Պետական օգնությունը" վերահսկելու կանոնակարգ, այլ կերպ ասած դա պետական անձանց, տեղական ինքնակառավարման մարմինների կամ այլ հանրային անձանց կողմից կամ հասարակական ռեսուրսների միջոցով տրամադրված առավելություններ են, որոնք կարող են խոչընդոտել ազգային շուկաների բացմանը Եվրոպական Միության ներսում:

Պետական օգնության ցանկացած նախագծի մասին մինչև իրականացումը պետք է ծանուցվի Եվրախորհրդի անդամ պետությունների կողմից:

"Հանրային ծառայության փոխհատուցման" համար պետական ներդրումները (կամ ընդհանուր տնտեսական շահի այլ ծառայությունները), որոնք չափից շատ չեն, չեն համարվում Պետական օգնություն, իսկ երբ դրանց գումարը որոշվում է ազատ մրցակցության ընթացակարգի շրջանակներում, դրանք համարվում են բավարար:

Կան նաև կանոնակարգեր, որոնք ապահովում են օգնության որոշակի տեսակներ (շրջակա միջավայրի պահպանություն, հետազոտություն...)

Անօրինական օգնությունները պետք է հետ վերադարձվեն շահառու ընկերության կողմից: Ուստի անհրաժեշտ է ուշադիր լինել և խորհրդակցել իրավական բաժնի հետ հանրային օգնության ցանկացած հարցի վերաբերյալ:

Ներքին և արտաքին հաղորդակցման վերահսկում

Անհրաժեշտ է ոչ միայն համապատասխանել մրցակցության օրենքին, այլ նաև ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ խուսափելու համար ցանկացած իրավիճակից, որը կարող է սխալմամբ տանել նրան, որ ուրիշները կասկածեն ոչ պատշաճ վարվելաձև:
Այս առումով էական է իրականացնել խիստ հսկողություն ներքին և արտաքին հաղորդակցման նկատմամբ:
Տարածված սխալ է կարծել, որ բանավոր հաղորդակցությանը չի կարելի հետևել կամ որ ընդհանուր ոչ պաշտոնական կամ անձնական նշումները (ձեռագիր նշումներ փոստաթղթի լուսանցքում, գրառման թերթիկներ, օրակարգեր, էլ փոստ, ակնթարթային հաղորդագրություններ) չունեն որևէ հնարավոր իրավական հետևանքներ:
Նախադեպային իրավունքը ապահովում է ընկերության ֆայլերում հայտնաբերված տարրերի բազմաթիվ օրինակներ, որոնք առաջին հայացքից անվնաս են: Այս առումով փաստաթղթերի վրա դրոշմված “անձնական”, “կոնֆիդենցիալ” կամ “գաղտնի” բառերը համարվում են նախազգուշացում, չնայած հազվադեպ դա խանգարում է ստանալ փաստաթուղթը հետաքննության ընթացքում կամ անդրադառնալ դրան դատավարության ժամանակ:

Ոչ պաշտոնական կամ անձնական նշումները ամենայն հավանականությամբ քննիչի մոտ կասկած են առաջացնում, երբ համառոտ անդրադառնում են այն տեղեկատվությանը, որը կարևոր է մրցակցության օրենքի տեսանկյունից առանց հստակորեն աղբյուրները նշելու: Այդ պատճառով էական է հստակորեն անդրադառնալ տեղեկատվության աղբյուրների օրինականությանը (բացառությամբ մրցակիցների) և դրանց օգտագործմանը (որը բարելավում է ընկերության տնտեսական արդյունավետությունը):
Նույն զգուշությունը պահանջվում է արտաքին հաղորդակցման համար, որպեսզի սխալմամբ չառաջանան կասկածներ մրցակցության օրենքին Վեոլիայի գործողությունների համապատասխանության հետ կապված:
Հատուկ ուշադրություն պետք է դարձվի ֆինանսական շուկաների հետ կապված հաղորդակցման հետ գործ ունենալիս:
Անհրաժեշտ է խորհրդակցել Գրուպի իրավական բաժնի հետ ցանկացած կարևոր հաղորդակցումից առաջ նախնական կարծիքի համար:
Պետք է նաև նշվի, որ Եվրոպական Միության սահմաններում ցանկացած կարևոր հաղորդակցություն իրավաբանի և հաճախորդի միջև համարվում է գաղտնի, որոշակի սահմաններում: Այս պաշտպանությունը չի վերաբերվում ներքին իրավաբանի և ընկերության ներսում այլ անձանց կամ երրորդ կողմերի միջև հաղորդակցմանը:

Գործնական առաջարկներ

Մրցակցության օրենքի կանոններին համապա-տասխանությանը վստահ լինելու և ընկերության կամ անհատների հանդեպ պատժամիջոցների ռիսկից խուսափելու համար.

- Դուք պետք է խուսափեք մրցակից օպերատորների ներկայացուցիչների հետ ցանկացած կապից.
- Հանդիպման դեպքում պետք է հավաստիանաք նման հանդիպման (ընկերություն, միություններ, ենթակապալառու կամ խմբային համաձայնագիր) օրինականությանը և վստահ լինեք, որ խոսակցությունը չի տեղափոխվում այլ թեմաների.
- Դուք պետք է արգելեք որևէ հույժ և/կամ գաղտնի տեղեկատվության փոխանակում.
- Դուք պետք է խորհրդակցեք Ձեր օպերատիվ կազմակերպության և Գրուպի իրավական բաժնի հետ մրցակցի հետ հարաբերություններ ենթադրող ցանկացած ծրագրից առաջ (ենթապայմանագրերի կնքում, խմբավորում, գործընկերություն) և իրավիճակի օրինականության կասկածի դեպքում.
- Պետք է ներկայացնեք Գրուպի իրավական բաժնին ցանկացած պայմանագրի նախագիծ, որը կներառի բացառիկության դրույթներ (տես հիմնական h°13 ներքին ընթացակարգի համապատասխանությունը մրցակցության օրենքին, որը հասանելի է իրավական ինտրանետային կայքում), ոչ մրցակցային դրույթներ, անգլերեն դրույթներ, զեղչեր կամ որևէ հնարավոր վիրավորական պայման.

Կասկածներ չառաջացնելու կամ մրցակցության օրենքը չխախտելու համար (մասնավորապես հետաքննության դեպքում) իրականացրեք խիստ հսկողություն ընկերության ներքին և արտաքին հաղորդակցման նկատմամբ:
Նախագծի ձեռքբերման կամ միաձուլման, համատեղ ձեռնարկության ստեղծման կամ դրանցից զրկվելու դեպքում դիմեք կենտրոնացման համար Գրուպի ներքին h°12 հիմնական ընթացակարգին, որը հասանելի է իրավական ինտրանետում:
Մրցակցության օրենքի կողմից Վեոլիային առաջարկվող հնարավորություններից օգուտ ստանալու համար միշտ իմացեք, որ մրցակցության օրենքը նաև վերաբերում է մրցակիցներին, հաճախորդներին և մատակարարներին և որ դա կարող է Վեոլիայի համար իր գործունեությունը զարգացնելու ճանապարհ հանդիսանալ կամ նույնիսկ փոխհատուցվել համաձայն պատժամիջոցների որոշմանը, մասնավորապես դատապարտելով անազնիվ մատակարարներին, կամ օգուտ քաղել նոր շուկաների բացումից:

Մրցակցության օրենքին համապատասխանության ծրագիր

Մրցակցության օրենքին համապատասխանությունը աշխատակիցների կողմից ապահովելու և մրցույթի կանոնների հետ կապված իրավական ռիսկերը կանխելու համար Վեոլիան երկար տարիներ սահմանել է մրցույթի օրենքի համապատասխանության h°13 ներքին հիմնական ընթացակարգ, որը պահանջում է բոլորի, մասնավորապես ղեկավարների ակտիվ միջամտություն, խմբային ընթացակարգերի և խորհուրդների իրականացում, ուժեղացված իրավական մոնիթորինգ և վերապատրաստման մոդուլների տեղակայում:

Այս ծրագիրը ներառում է մրցակցության աուդիտների կազմակերպում: Նման աուդիտները, որոնք մանկավարժական

են, բաղկացած են (i) սերտորեն աշխատող իրավական բաժնի և մասնագիտացված իրավաբանների կողմից տրված դասընթացներից մրցույթի օրենքի մեջ և (ii) իրական կյանքի իրավիճակներում իրավաբանների և որոշակի աշխատակիցների միջև անհատական հարցազրույցներից:

Այս աուդիտների նպատակն է հնարավորություն տալ Վեոլիային:

- համոզվել, որ աշխատակիցները համապատասխանում են Ուղեցույցում ամփոփված կանոններին

- որոշել ցանկացած փաստաթղթի հնարավոր առկայությունը մասնագիտացված ֆայլերում, որը կարող է հայտնաբերել Ուղեցույցի մեջ զետեղված կանոնների խախտում

Ուղեցույցի մեջ ամփոփված կանոնների խախտման մեջ ապացուցված սխալները կարող են տանել ներքին կանոններով նախատեսված կարգապահական պատժամիջոցների:

Տվյալների հավաքման և մշակման կանոններին համապատասխան՝ աշխատակիցներին տրվում է իրավունք մուտք գործել, փոփոխել և ուղղել իրենց վերաբերող տվյալները, որոնք հավաքվել են աուդիտների ընթացքում Մարդկային ռեսուրսների բաժնի կամ իրենց տվյալները պաշտպանող ղեկավարի կողմից՝ տեղային կիրառելի տվյալների պաշտպանման օրենքներից կախված:

Վեոլիա ընկերության համար մուտքի իրավունքը կարող է իրականացվել՝ կապվելով էլ. Հասցեով:
access-right-group.dpo@veolia.com

© Veolia - Հոկտեմբեր 2023 – Photo credits: Phototheque Veolia, Christophe Majani d'Inguimbert - Design: ikoneo

Veolia
30, rue Madeleine Vionnet 93300 Aubervilliers - France
www.veolia.com